ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արևիկ Անափիոսյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բրյուսել, 2019 թվականի դեկտեմբերի 15-17

4. Հրավիրող Կողմը

Եվրոպական Միություն

5. Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի երկրորդ նիստին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված Թեմաները

- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կատարման ընթացք,
- տնտեսական զարգացման, անվտանգության, Արևելյան գործընկերության և տարածաշրջանային զարգացումներ,
- մարդու իրավունքների պաշտպանության ապահովում,
- կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանություն,

- կրթական բարեփոխումների շուրջ երկխոսություն,
- իրավունքի գերակայությանը, միգրացիային, տնտեսական զարգացմանը և կրթությանը, ինչպես նաև Արևելյան գործընկերությանը և տարածաշրջանային խնդիրներին առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Եվրոպական միությունը շարունակում է մնալ Հայաստանում բարեփոխումների հիմնական գործընկերը՝ աջակցություն տրամադրելով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդումը, տնտեսական զարգացումը, մասնավոր հատվածի և ենթակառուցվածքային ներդրումների ֆինանսավորման հասանելիությունը:

Նիստի ժամանակ տեղի ունեցած ոլորտային քննարկումների ձևաչափի համաձայն, ելույթի միջոցով քննարկվել են ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրագործման ընթացքը: Համաձայնագիրը կարևոր դերակատարում ունի ՀՀ կառավարության հավակնոտ և երկարաժամկետ ռազմավարական տեսլականին համահունչ բարեփոխումների իրականացման և երկրի արդիականացման գործում:

Հանդիպման ընթացքում ԵՄ վերահաստատեց իր աջակցությունը ՀՀ կառավարության բարեփոխումների գործընթացին և ընդգծեց, որ ՀԸԳՀ իրականացումը կհանդիսանա երկրում բարեփոխումների և արդիականացման հիմնական գործիք, կօգնի ԵՄ ներդրումների ներգրավմանը, կխթանի ԵՄ հետ փոխանակումները և հստակ օգուտներ կապահովի ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ քաղաքացիների համար:

Հանդիպումներ

Կայացել է հանդիպում Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության Հայաստանի հետ գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսի, Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության արևելյան հարևանության հարցերով տնօրեն Լոուրենս Մերեդիթի, ինչպես նաև այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Գործընկերության Կոմիտեն դիտարկել է նաև ՀԸԳՀ-ի իրականացումը տրանսպորտի, էներգետիկայի և շրջակա միջավայրի բնագավառներում՝ դեպի հետագա առավել մանրամասն քննարկումների կազմակերպմանը փորձագետների մակարդակով ԵՄ-Հայաստան էներգիայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, կլիմայի գործողության և քաղաքացիական պաշտպանության հարցերով ենթակոմիտեի շրջանակում, որը նախատեսված է իրականացնել Երևանում, 2020-ի մարտին: Միևնույն ժամանակ, ԵՄ-ն և Հայաստանը պայմանավորվել են սկսել մարտ ամսվա կանոնավոր փորձագիտական խորհրդակցություններ՝ կլիմայի գործողությունների և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում հատուկ թեմաների առավել խորքային քննարկման նպատակով:

Գործընկերության Կոմիտեն որոշեց շարունակել ԵՄ-Հայաստան քաղաքականության երկխոսությունները՝ ի պաշտպանություն դատական և կրթության ոլորտի բարեփոխումների: ԵՄ կողմն ընդգծեց Հայաստանի կողմից որդեգրված բարեփոխումների ուղու շարունակումը, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից: Բարեփոխումը պետք

համապատասխանի իրավունքի գերակայության հիմնական սկզբունքներին և հիմնված լինի բոլոր շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ քաղհասարակության հետ ընդգրկուն երկխոսության և գործընկերության վրա: Որպես Հայաստանի բարեփոխումների առանցքային գործընկեր՝ ԵՄ-ն պատրաստ է տրամադրել բարեփոխումների մշակման և իրականացման, ինչպես նաև ԵՄ չափանիշներին մոտարկման ուղղությամբ կառավարության կարողությունների ուժեղացման համար անհրաժեշտ փորձագիտական և ֆինանսական հետագա աջակցություն:

ԵՄ-ն և Հայաստանը կկդիտարկեն երիտասարդության ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման վերաբերյալ հնարավոր երկխոսության ուղղությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը. ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

ՀՀ և ԵՄ միջև կշարունակվի կրթական բարեփոխումների շուրջ երկխոսությունը: Կողմերը հետամուտ կլինեն համագործակցությանը հետազոտությունների ոլորտում «Հորիզոն 2020» ծրագրի ներքո և խորհրդակցություններ կսկսեն «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շուրջ: Միևնույն ժամանակ երկու կողմն էլ կդիտարկի երիտասարդության ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման և իրագործման, ինչպես նաև 2020թ. համար երիտասարդական ռազմավարության ճանապարհային քարտեզի ներդրման ուղղությամբ ուժեղացված երկխոսության հնարավորությունները:

Պայմանավորվածություն է նաև ձեռք բերվել շարունակել աշխատել Վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212

20.12.2019 թ.